ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

174 (2654)

2 դեկտեմբերի ուրբաթ 2022
տպագրության ԺԱ տարի

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽԱԲԵԼ Է. ՄԱՍ 146

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը նոյեմբերի 11-ին Հանրային հեռուստաընկերությանը տված իր հարցազրույցում պնդեց, թե նոյեմբերի 9-ին՝ կառավարության նիստի ժամանակ տեղի ունեցած իր ելույթի արդյունքում Ադրբեջանի արտաքին գործերի նախարարությունն իր նոր հայտարարություններում «Զանգեզուրի միջանցք» արտահայտությունն այլեւս չի օգտագործում: «Սա ինչո՞վ է կարեւոր. տեսեք, չնայած նրան, որ Ադրբեջանի նախագահն իր խոսույթում անընդհատ խոսում է խոստացված միջանցքի մասին, Արտաքին գործերի նախարարությունը միջանցք բառը չի օգտագործում», - նշել էր նա: Սակայն Ադրբեջանի ԱԳՆ-ն, չնայած Փաշինյանի պնդումներին, օգտագործել է «Զանգեզուրի միջանցք» ձեւակերպումը, այն էլ՝ երեք անգամ, եւ հիշատակումներն առկա են մի քանի լեզուներով: Այսինքն՝ Նիկոլ Փաշինյանի այն պնդումը, թե իր ելույթի արդյունքում Ադրբեջանի արտաքին գործերի նախարարությունն իր նոր հայտարարություններում «Զանգեզուրի միջանցք» արտահայտությունն այլեւս չի օգտագործում, հերթական մանիպուլյացիան է:



ՀՀ վարչապետի տիկին Աննա Հակոբյանի ղեկավարած «Իմ քայլը» հիմնադրամում անանուն նվիրատվությունների շքերթը շարունակվում է: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ այս տարվա ընթացքում հիմնադրամի նվիրատուներից շատերը, ինչ-ինչ պատճառներից ելնելով, դարձյալ նախընտրել են ստվերում մնալ: Այսպես, 2021-2022 թվականներին դոլարային անանուն փոխանցումները երկուսն են եղել՝ միանվագ 300 հազար ու 5 հազար դոլար: Դրամային անանուն փոխանցումները 9-ն են եղել՝ ընդհանուր 109 մլն 636 հազար 468 դրամ: Անանուն նվիրատվությունների համար, հիշեցնենք, Փաշինյանի իշխանության այժմյան կարկառուն ներկայացուցիչներ, ՔՊ-ական պատգամավորներ Լենա Նազարյանն ու վարչապետի աշխատակազմի ղեկավար Արայիկ Հարությունյանը տարիներ առաջ դատի էին տվել «Երեւան» հիմնադրամին՝ պարզելու համար, թե ովքեր են եղել հիմնադրամին 100 հազար դրամից ավելի անանուն գումարներ փոխանցած անձինք: Այսօր, փաստորեն, նույն իշխանականների համար «իրավիճակ է փոխվել», ու վարչապետի տիկնոջ հիմնադրամին տասնյակ հազարավոր դոլարների հասնող անանուն փոխանցումներ անելու մեջ արտառոց որեւէ բան չեն տեսնում: Իրականությունը, սակայն, նաեւ այն կարող է լինել, որ անանուն նվիրատվություն անվան ներքո Փաշինյան-գործարարներ հարաբերությունները կամ «լեզու գտնելու» գաղտնիքը թաքնված լինի:

Արցախի պետական նախարար Ռուբեն Վարդանյանի խորհրդական Մեսրոպ Առաքելյանն առաջարկում է վերանայել ու դադարեցնել ֆիզիկական ու իրավաբանական անձանց 10-ը միլիարդ դրամ տրամադրելու գործընթացը: Facebook-ի իր էջում նա օրեր առաջ մասնավորապես գրել է. «Արցախի ներդրումային հիմնադրամը պատերազմից հետո պետական բյուջեի միջոցներից ավելի քան 10 մլրդ դրամի փոխառություն է տրամադրել ֆիզիկական եւ իրավաբանական անձանց: Հիմնադրամի նշված գործունեության արդյունավետությունը գնահատելու նպատակով Արցախի Հանրապետության պետական նախարարին առաջարկել եմ ուսումնասիրություններ իրականացնելու հանձնարարական տալ՝ միեւնույն ժամանակ ժամանակավորապես դադարեցնելով փոխառությունների տրամադրումը»: Փաշինյանի կաբինետում կարճ ժամանակ սոցապնախարար աշխատած Առաքելյանը, իհարկե, վատ բան չի առաջարկում, բայց 10 մլրդ դրամների տրամադրման արդարացված-չարդարացված լինելու հանգամանքի ուսումնասիրությունը նախ պետք է սեփական թիմից սկսել, օրինակ՝ Վարդանյանի թիմում ներգրավված, «Կապավոր» ՍՊԸ-ի տնօրենների խորհրդի նախագահ Արման Հակոբջանյանից, որը նույնպես 10 մլրդ դրամից վստահաբար աջակցություն է ստացել գուցե ոչ ուղիղ, այլ փոխկապակցված անձանց կամ ընկերությունների միջոցով: Հարկ է ուսումնասիրությունն ու հանգամանքների պարզաբանումը նախ սեփական թիմից սկսել, ապա նոր միայն այդ մասին վերամբարձ հայտարարություններ կամ գրառումներ անել: Մենք հետեւողական կսպասենք Ռուբեն Վարդանյանի բացահայտմանը՝ ամենահաջող կադր համարվող Արման Հակոբջանյանի ունեցվածքի հետքերով:



Ոլշագրավ իրավիճակ՝ ԱԺ ՔՊ-ական պատգամավոր Սիսակ Գաբրիելյանի եւ քաղաքացիների հետ միջադեպի գործով: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ դատախազը հրաժարվում է ստորագրել եւ գործը դատարան ուղակել, ինչի արդյունքում գործը կրկին ուղարկվում է նախաքննական մարմին՝ քննությունը շարունակելու համար: Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ անգամ գործը հասել է դատարան եւ դատարանից հետ է ուղարկվել նախաքննական մարմին՝ նորից քննություն իրականացնելու համար: Իսկ ի՞նչ միջադեպի մասին է խոսքը. ինչպես հայտնի է, 2020 թվականի դեկտեմբերի 28-ին Ազգային ժողովի մուտքի մոտ՝ Դեմիրճյան փողոցում, միջադեպ է տեղի ունեցել ԱԺ «Իմ քայլը» խմբակցության պատգամավորների եւ բողոքի ակցիա իրականացնող քաղաքացիների միջեւ: Համացանցում հայտնվել է տեսանյութ, որում երեւում է, թե ինչպես են քաղաքացիները Սիսակ Գաբրիելյանի մեքենայի դիմացը փակել: «Պողոսն է, ով է», «Գնում է պարգեւավճարը ստանալու», «էթում ես պարգեւավճարը ստանա՞ս» եւ նմանատիպ այլ արտահայտություններ էին անում քաղաքացիները, երբ Գաբրիելյանը բարկացած դուրս է գալիս մեքենայից, ու սկսվում է հրմշտոց, որի ընթացքում հնչում են փոխադարձ հայհոյանքներ: Տեսանյութում երեւում է, թե ինչպես է Գաբրիելյանը հարվածում ու քաշքշում քաղաքացիներից մեկին, հետո տվյալ քաղաքացին երեւում է գետնին պառկած վիճակում: Եվ, ահա, 2 տարի է՝ նախաքննություն է գնում այս դեպքով. Սիսակ Գաբրիելյանը տուժող է, իսկ, ահա, միակ մեղադրյալը ՀՅԴ ԳՄ անդամ, Արագածոտնի նախկին մարզպետ Աշոտ Սիմոնյանն է: Ի դեպ, Սիմոնյանը դիմել է իրավապահներին, որ կարողանա երկրից դուրս գալ, բայց արդեն երկու տարի է՝ նա չի կարողանում երկրից դուրս գալ, իսկ նախաքննությունը երկու տարի է, ինչ այստեղից այնտեղ է տեղափոխվում: Այսքանով իրավիճակը չի ավարտվում. որոշվել է այս գործը Հակակոռուպցիոն կոմիտեի վարույթից վերցնել ու տեղափոխել ՀՀ քննչական կոմիտեի Արաբկիրի քննչական բաժին:

ՎՐԱԵՐԹԻ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ

ԴԵՊՔՈՎ ԿԱՐԵՎՈՐ ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐ ԵՆ ԱՆՀԵՏԱՑԵԼ

Ազգային ժողովի «Հայաստան» խմբակցության պատգամավոր Քրիստինե Վարդանյանը, ArmLur.am-ի հետ զրույցում անդրադառնալով Վանաձորում պարեկային ոստիկանության աշխատակիցների կողմից երիտասարդ տղային ու նրա հորը դաժան ծեծի ենթարկելու հանգամանքին, նշում է, որ դա Երեւանում օրը ցերեկով հղի կնոջը վրաերթի ենթարկելու դեպքի շարունակությունն էր:

-Տիկին Վարդանյան, օրերս ահազանգել էիք, որ Վանաձորում պարեկային ոստիկանության ծառայակիցները դաժանաբար ծեծի են ենթարկել քաղաքացիների, որոնցից մեկը եղել է անչափահաս: Խնդրում եմ, կասե՞ք՝ ինչ տեղեկություններ ունեք, գործը որ փուլում է, եւ ինչ արձագանքներ են եղել:

-Դեպքից անցել է շուրջ հինգ օր, եւ կարող ենք արձանագրել դեպքը տեղի ունենալու փաստը, իսկ փաստը հետեւյալն է. միջադեպ է տեղի ունեցել մի կողմից առնվազն տասնյակը գերազանցող հատուկ միջոցներով զինված պարեկային ծառայության աշխատակիցների, մյուս կողմից՝ անզեն քաղաքացիների միջեւ: Միջադեպի արդյունքում հիվանդանոցում են հայտնվել երկու քաղաքացի, այդ թվում նաեւ՝ անչափահաս, բազմաթիվ վնասվածքներով, որոնցից մեկն ունի կողոսկրի չորս կոտրվածք: Իսկ պարեկային ծառայության աշխատակիցների վնասվածքների մասին մինչ օրս ոստիկանությունում հայտարարություն չկա, ինչը մեզ թույլ է տալիս ենթադրել, որ նման մարդիկ պարզապես չկան: Քննչական կոմիտեն տարածեց ծիծաղելի հայտարարություն, որտեղ նկարագրում էր, թե ամեն ինչ տեղի է ունեցել օրենքի տառին համապատասխան, բայց, չգիտես, թե ինչու, մարդիկ հարձակվել են պարեկային ծառայություն իրականացնող աշխատակիցների վրա, երկաթե ձողով ինչ-որ գործողություններ են ձեռնարկել, բայց վնասվածքներ են ստացել փաստացի միայն քաղաքացիները: Մեզ համար դեպքը հատկանշական է. սա Հայաստանում տիրող անպատժելիության մթնոլորտի հերթական դրսեւորումն է: Մենք չենք կարող այս դեպքը դիտարկել առանձին. սա շղթա է, օրինակ՝ հղի կնոջ սպանությունը Երեւանի փողոցում, որը մինչ օրս բացահայտված չէ, եւ որեւէ մեկը պատժված չէ: Իսկ փաստաբանը պարբերաբար պնդում է, որ դեպքով կարեւոր ապացույցներ են անհետացել: Սա պատասխանն է նրանց, ովքեր ասում են՝ ինչպես կարող է պատահել, երբ տեսագրություններն առկա են, եւ այսպես ես կարող եմ անվերջ թվել դեպքերը: Ինձ համար շատ կարեւոր է այս դեպքով հանրության ուշադրության սեւեռումը: Փաստորեն, Լոռու այս անզեն, անպաշտպան բնակիչների պաշտպանողները մնացել են միայն հանրության ներկայացուցիչները, քանի որ պետությունն իրենց չի պաշտպանում, այլ, հակառակը, գործում է իրենց դեմ: Օգտվելով առիթից՝ եւս մեկ անգամ հրավիրում եմ բոլոր իրավապաշտպան կազմակերպություններին եւ անհատների ուշադրությունը: Ես պատրաստվում եմ նաեւ այս դեպքի առնչությամբ մի քանի գործողություններ ձեռնարկել, որոնց մասին անպայման կհայտարարեմ:

-Ի՞նչ գործողությունների մասին է խոսքը:

-Խոսքս դեպքի վրա ուշադրություն հրավիրելու եւ այս պարեկային ծառայության ֆինանսավորման, այդ թվում նաեւ՝ տրված միջազգային կառույցներին դիմելու մասին է, քանի որ կենտրոնում քաղաքացու իրավունքների պաշտպանությունն է. ոչինչ որ հիմա հայկական պետությունն իր քաղաքացիների իրավունքներով չի զբաղվում, բայց հայ հասարակությունը մահացած չէ, կան այդտեղ տարբեր անհատներ, որոնք պատրաստ են կանգնել մարդկանց կողքին: Դեպքով բոլոր մեղավորները պետք է պատժվեն: Սա կլինի ոստիկանության համար միակ ելքը, որպեսզի ձերբազատվեն արատավոր անունից:

Զրուցեց ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆԸ

ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ

ՔՊ–ՈՒՄ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ԵՆ

Այսօր՝ դեկտեմբերի 2-ին, խորհրդարանում տեղի է ունենալու արտահերթ նիստ: Օրակարգում «Հայաստան» խմբակցության հեղինակած՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի հայտարարության նախագիծն է՝ Ադրբեջանի խորհրդարանի՝ 2022 թվականի նոյեմբերի 8-ի հայտարարության կապակցությամբ:

Իշխող «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունը հայտարարել է, որ մասնակցելու է նիստին:

Նոյեմբերի 30-ին ԱԺ արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Էդուարդ Աղաջանյանը հայտարարեց, որ նախագծում կետեր կան, որոնք իրենց համար ընդունելի են, բայց կետեր էլ կան, որ ընդունելի չեն, ուստի իշխող խմբակցությունն առաջարկել է որոշակի փոփոխություններ կատարել նախագծում:

ArmLur.am-ի տեղեկություններով՝ հենց այս պահին ԱԺ արտաքին հարաբերությունների հանձնաժողովի՝ ընդդիմադիր եւ իշխանական անդամները քննարկում են նախագիծը: Մեր տեղեկություններով՝ իշխող ֆրակցիան փորձում է ընդհանուր հայտարարի գալ այս հարցում ընդդիմության հետ եւ առավել միտված է կողմ քվեարկել ընդդիմության նախագծին՝ որոշակի փոփոխություններից հետո: ՔՊ-ականները, ըստ մեր ունեցած տեղեկությունների, փորձում են, մասնավորապես, նախագծից հանել այն կետերը, որոնք քննադատում են իշխանությունների վարած քաղաքականությունը.

«Փորձում ենք ստանալ մի նախագիծ, որը ո՛չ ընդդիմությանն է, ո՛չ էլ իշխանությանը, այլ հանուն Հայաստանի շահերի է: Արտաքին ճակատում պետք է միասնական հանդես գանք»,-ասաց ՔՊ-ական մեր աղբյուրը:

Նշենք՝ սա առաջին նախադեպն է, որ իշխանությունը միտված է կողմ քվեարկել ընդդիմության հեղինակած նախագծին:

Մինչ այս Հայաստանի եւ Արցախի վերաբերյալ գրեթե բոլոր նախագծերը տապալվել են իշխող ֆրակցիայի կողմից:

ԳՈՐԾԸ ՉԻ ԲԱՑԱՀԱՅՏՎԵԼ

Հասարակական-քաղաքական գործիչ Էդգար Ղազարյանին ծեծի ենթարկելու դեպքից 45 օր անց այն այդպես էլ չի բացահայտվել. չկա ո՛չ կասկածյալ, ո՛չ մեղադրյալ: Հիշեցնենք, որ հոկտեմբերի 18-ին անհայտ անձինք հարձակվել եւ ծեծի են ենթարկել Էդգար Ղազարյանին: Ըստ տուժողի՝ դեպքը տեղի է ունեցել իրենց շքամուտքի մոտ, երբ տուն էր վերադառնում վարսավիրանոցից: Նույն օրը ՔԿ-ում քրեական վարույթ էր նախաձեռնվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 171-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով՝ մի խումբ անձանց կողմից առողջությանը թեթեւ վնաս պատճառելու հատկանիշներով: «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ ծեծի ենթակելու միջադեպի գործով իրավապահներն անձանց են տարել հարցաքննությունների, սակայն որեւէ արդյունք դեռ չկա, եւ 45 օր անց անգամ կասկածյալ չկա: Ավելին, այս իրավիճակից հետո Ոստիկանությունում սկսել են քննարկել նաեւ այն վարկածը, թե հենց Էդգար Ղազարյանը կարող էր ծրագրած լիներ իրեն ծեծի ենթարկելու գործը: Իհարկե, սա նաեւ առկա անգործությունը քողարկելու պատրվակ է, քանի որ իշխանական գործչին ծեծի ենթարկելու դեպքում այն կբացահայտվեր ժամերի ընթացքում:

ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԸ ՀԱՅՏՆԻ ԵՆ

Ազգային ժողովն առաջիկայում մի քանի դատավորներ պետք է ընտրի, թեկնածուներն արդեն հայտնի են: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ թափուր է դատավորի պաշտոն Վճռաբեկ դատարանի վարչական պալատում, Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի կոռուպցիոն հանցագործությունների քննության դատական կազմում, Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի քաղաքացիական գործերի քննության դատական կազմում, ինչպես նաեւ Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի քաղաքացիական գործերի քննության դատական կազմում: Հետաքրքիր է, որ առաջարկվել են Լիզա Գրիգորյանի, Լիլիթ Խաչատրյանի եւ Արման Կուրեխյանի թեկնածությունները Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի քաղաքացիական գործերի քննության դատական կազմում ընդգրկելու համար: Հիշեցնենք՝ Լիզա Գրիգորյանն այն դատավորն էր, որն այս տարվա ապրիլի 13-ին վճռել էր պարտավորեցնել «Ժողովուրդ» օրաթերթին հրապարակավ ներողություն խնդրել հայցվորից վիրավորական արտահայտությունների համար: Պարզվում է՝ Լիզա Գրիգորյանը մտերիմ ընկերուհի ունի ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ներսում: Խոսքն ԱԺ աշխատանքի եւ սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Հերիքնազ Տիգրանյանի մասին է: Այսինքն, ՔՊ-ական պատգամավորի ընկերուհին առաջիկայում նոր պաշտոնի կընտրվի: Ահա հովանավորչության կոնկրետ դրսեւորում:

ԻՐԱՎԻՃԱԿ

ԳՈՒՅՔ ԵՆ ՆՎԻՐԱԲԵՐՈՒՄ

44 օրյա պատերազմի մասնակից Գոռ Թումանյանի անվամբ արվեստի դպրոց կհիմնվի Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքում: ArmLur.am-ը տեղեկացավ, որ այդ նպատակով ՀՀ ՏԿԵ նախարարության պետական գույքի կառավարման կոմիտե է դիմել ՀՀ Արագածոտնի մարզպետը՝ տեղեկացնելով, որ մարզպետարանին է դիմել Արցախյան 2-րդ պատերազմի ժամանակ զոհված Գոռ Թումանյանի հայրը՝ իր որդու անվամբ երաժշտական դպրոց վերակառուցելու նպատակով Աշտարակ քաղաքում գտնվող նախկին դատարանի շենքը սեփականության իրավունքով «Գոռ Թումանյանի անվան կրթամշակութային կենտրոն» հասարակական կազմակերպությանը հատկացնելու խնդրանքով:

Բարձրացված խնդիրը Պետական գույքի կառավարման կոմիտեն քննարկել է ՀՀ Արագածոտնի մարզպետարանի հետ, եւ իրականացված քննարկումների արդյունքում առաջարկվում է նշված գույքը կազմակերպությանը հատկացնել նվիրաբերությամբ:

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԳՈՒՄԱՐ ԿՍՏԱՆԱ

«ԵՄ դիմակայունության գործիքը Հայաստանի համար» ֆինանսավորման համաձայնագիրը երեկ հաստատվեց կառավարության նիստում: Ծրագիրը ֆինանսավորվում է ԵՄ բյուջեից՝ 23 մլն եվրո ընդհանուր արժողությամբ, ԵՄ-Հայաստան 2021-2027թթ. բազմամյա ինդիկատիվ ծրագրի շրջանակներում, առանց հայկական կողմի համաֆինանսավորման բաղադրիչի:

«ԵՄ դիմակայունության գործիքը Հայաստանի համար» դրամաշնորհային ֆինանսավորման համաձայնագիրը ստորագրվել է այս տարվա հոկտեմբերին, որի նպատակն է աջակցել համավարակին եւ պատերազմին հաջորդած ժամանակաշրջանում կանաչ, ներառական եւ դիմակայուն սոցիալ-տնտեսական վերականգնմանը եւ զարգացմանը:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է.

Մասնավոր հատվածի բարձր մրցունակություն՝ սոցիալ-տնտեսական ավելի մեծ ազդեցություն ունենալու եւ ներդրումներ ներգրավելու համար:

Այս համատեքստում աջակցություն կտրամադրվի Սյունիքի մարզում ՓՄՁ-ների ինկուբացիային եւ արագ զարգացմանը, բիզնեսների վերականգնմանը, քաղաքային եւ սոցիալ-տնտեսական ենթակառուցվածքներում իրականացվող միջոցառումներին, երիտասարդների, կանանց եւ խոցելի խմբերի ներգրավմանը եւ կարողությունների հզորացմանը, Սփյուռքի ներգրավմամբ ծրագրերի իրականացմանը, ինչպես նաեւ Գյումրիում «կանաչ» խոհարարության ու հյուրընկալության կառավարման դպրոցի եւ ձեռնարկատիրական կենտրոնի հիմնադրմանը:

Աջակցություն կցուցաբերվի նաեւ փորձնական թիրախային ծրագրերին եւ նախաձեռնություններին Սյունիքում, ինչպես նաեւ սահմանամերձ այլ շրջաններում բարդ ու բազմակողմ ռիսկերը վերացնելու եւ ցնցումների ենթարկված խմբերի կարիքներին առավել լավ արձագանքելու նպատակով:

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

ԻՆՉՈ՞Ւ ԵՆ ՄԻՆՉԵՎ ՕՐՍ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԸ

Այն բանից հետո, երբ Ազգային ժողովի «Հայաստան» եւ «Պատիվ ունեմ» խմբակցությունների՝ խորհրդարանում պաշտոն զբաղեցնող անդամները հրաժարական են ներկայացրել ու հրաժարվել զբաղեցրած պաշտոններից, դրանք մինչեւ օրս թափուր են մնացել:

Այսպես, «Հայաստան» խմբակցության պատգամավոր Իշխան Սաղաթելյանից հետո ԱԺ փոխնախագահի, Արմեն Գեւորգյանի ու Վահե Հակոբյանի, համապատասխանաբար՝ Տնտեսական հարցերի եւ Տարածաշրջանային ու եվրասիական ինտեգրման հարցերի մշտական հանձնաժողովների նախագահների, ինչպես նաեւ «Պատիվ ունեմ» խմբակցության ղեկավար Հայկ Մամիջանյանի՝ Արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի փոխնախագահի պաշտոնը լքելուց հետո վերոնշյալ բոլոր պաշտոններում առ այսօր որեւէ մեկը չի պաշտոնավարում:

ArmLur.am-ն Ազգային ժողովի տեղեկատվության վարչությանը հարցում էր ուղարկել՝ պարզելու, թե վերոնշյալ պաշտոններն ինչու են մինչեւ օրս թափուր, ու ինչքան են դեռ այդպես մնալու: Ի պատասխան մեր հարցմանը՝ԱԺ-ից պատասխանել էին, որ խորհրդարանի մշտական հանձնաժողովի նախագահի թափուր պաշտոնում թեկնածու առաջադրելու իրավունք ունեն 138-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով որոշված խմբակցությունները՝ մշտական հանձնաժողովի նախագահի պաշտոնը թափուր մնալուց հետո՝ տասնօրյա ժամկետում: «Թեկնածուների առաջադրման իրավունքը պահպանվում է մինչեւ Ազգային ժողովի լիազորությունների ավարտը (138-րդ հոդված 2-րդ մաս): Սակայն եթե խմբակցությունը Կանոնակարգով սահմանված կարգով եւ ժամկետում մշտական հանձնաժողովի նախագահի կամ նրա տեղակալի՝ իրեն վերապահված թափուր պաշտոնում թեկնածու չի առաջադրում, ապա տվյալ պաշտոնում թեկնածու առաջադրելու իրավունքն անցնում է 138-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված կարգով խմբակցությունների գործակիցների հաշվարկի սկզբում ամենամեծ գործակիցն ունեցող խմբակցությանը (138-րդ հոդվածի 12-րդ մաս):

Հարցմամբ նշված հանձնաժողովի նախագահների թափուր պաշտոններում իրավասու խմբակցությունները թեկնածուներ չեն առաջադրել»,- ասված էր պատասխանի մեջ:

ԱԺ փոխնախագահի պաշտոնը թափուր մնալու համար էլ պատասխանել էին, որ ԱԺ նախագահի տեղակալների ընտրության կարգը սահմանված է Կանոնակարգի 137-րդ հոդվածով:

«Ազգային ժողովի կազմից Ազգային ժողովի նախագահի տեղակալի մեկական թեկնածու առաջադրելու իրավունք ունեն խմբակցությունները: Ազգային ժողովի նախագահի տեղակալներից մեկի թեկնածուն կարող է առաջադրվել միայն ընդդիմադիր խմբակցության կազմում ընդգրկված պատգամավորների թվից: Ազգային ժողովի նախագահի տեղակալի թափուր պաշտոնում թեկնածուներն առաջադրվում են Ազգային ժողովի նախագահի տեղակալի պաշտոնը թափուր մնալուց հետո՝ տասնօրյա ժամկետում: Ազգային ժողովի նախագահի տեղակալի պաշտոնը թափուր է 2022 թվականի հուլիսի 1-ից (ԱԺՈ-43-Ա): Ազգային ժողովի նախագահի տեղակալի թափուր պաշտոնում խմբակցությունները թեկնածու չեն առաջադրել»,- մանրամասնել էին ԱԺ տեղեկատվության վարչությունից:

Ի՞նչ է ստացվում. եթե հանձնաժողովների նախագահների կամ փոխնախագահի թափուր պաշտոնը կարող էր եւ ԱԺ մեծամասնության՝ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության կողմից լրացվել (եթե ընդդիմությունն 10-օրյա ժամկետում թեկնածու չի առաջադրում, ապա դա ԱԺ մեծամասնությունը կարող է անել), ապա ԱԺ նախագահի տեղակալի դեպքում դեպքում դա պարզապես անհնար է. 3 տեղակալներից մեկի քվոտան բացառապես ընդդիմությանն է պատկանում: Փաստն այն է, որ առ այսօր ԱԺ երկու հանձնաժողովներ նախագահ չունեն, խորհրդարանի ընդդիմադիր փոխխոսնակի աթոռն էլ շարունակում է դատարկ մնա:

ArmLur.am-ը վերջերս նկատել էր, որ Ազգային ժողովի տնտեսական, ինչպես նաեւ՝ տարածաշրջանային եւ եվրասիական ինտեգրման հարցերի մշտական հանձնաժողովների փոխնախագահները նախագահների աշխատասենյակներ են տեղափոխվել ու այնտեղ են աշխատում:

Խոսքը, մասնավորապես, Բաբկեն Թունյանի ու Վաղարշակ Հակոբյանի մասին է, որ Վահե Հակոբյանի ու Արմեն Գեւորգյանի՝ հանձնաժողովի նախագահի պաշտոններից հրաժարվելուց հետո փոխել են իրենց աշխատասենյակը:

ArmLur.am-ի հարցմանն ի պատասխան՝ Ազգային ժողովի տեղեկատվության վարչությունից հայտնեցին. «ԱԺ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի աշխատասենյակը չի օգտագործվում, իսկ Տարածաշրջանային եւ եվրասիական ինտեգրման հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի աշխատասենյակն այս պահին, որպես հանձնաժողովի նախագահի լիազորությունները կատարող, զբաղեցնում է հանձնաժողովի նախագահի տեղակալը»:

ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՀԻՆՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԸ ՇԱՐՈՒՆԱԿՎԵԼՈՒ ԵՆ

Հայաստանի արտաքին գործերի նախարարությունից մեկնաբանել են Թուրքիայի նախագահի մամուլի խոսնակ Իբրահիմ Քալընի հայտարարությանն այն մասին, որ նոյեմբերի սկզբին սահմանին տեղի է ունեցել հայ-թուրքական տեխնիկական պատվիրակությունների հանդիպում:

ԱԳՆ մամուլի քարտուղար Վահան Հունանյանը տեղեկացրեց, որ հանդիպմանը հայկական կողմից ներգրավված են եղել Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման հատուկ ներկայացուցիչների՝ հուլիսի 1-ին ձեռք բերված պայմանավորվածությունները կյանքի կոչելու հարցում վերաբերելի գերատեսչությունները:

«Հանդիպման ընթացքում քննարկվել են ձեռք բերված պայմանավորվածությունների կիրարկմանը վերաբերող տեխնիկական հարցեր: Քննարկումները շարունակվելու են»,- ասաց Հունանյանը:

Թուրքիայի նախագահի մամուլի խոսնակ Իբրահիմ Քալընը հայտնել էր, որ երկու երկրների ներկայացուցիչները եղել են սահմանի երկու կողմում ու անգամ ճաշել Հայաստանի տարածքում: «Քննարկվել են այն աշխատանքները, որոնք իրականացվելու են սահմանների բացման ժամանակ, կամրջի վերանորոգման, սահմանի վերահսկման, անցակետերի հետ կապված հարցեր: Այս առումով կարող ենք ասել, որ գործընթացում դրական տեղաշարժ կա»,- ասել էր Քալընը:

ԱՅՑ՝ ՀԱՅԱՍՏԱՆ

Կովկասյան բանակցությունների գծով ավագ խորհրդական դեսպան Ֆիլիպ Ռիքերը դեկտեմբերի 1-4-ը կգտնվի Երեւանում: Այս մասին հաղորդագրություն է տարածել Հայաստանում ԱՄՆ դեսպանությունը:

«Դեկտեմբերի 1-4 այցի ընթացքում դեսպան Ռիքերը կհանդիպի պետական պաշտոնյաների, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների եւ այլոց հետ՝ քննարկելու Միացյալ Նահանգների աջակցությունը տեւական խաղաղության հասնելուն միտված հայ-ադրբեջանական ուղիղ բանակցություններին»,- նշված է հաղորդագրության մեջ:

ՄԵԿՆԱՐԿՈՒՄ Է

Լեհաստանի Լոձ քաղաքում մեկնարկում է ԵԱՀԿ նախարարական 29-րդ համաժողովը:

ԱԳՆ-ից հայտնում են, որ հայկական պատվիրակությունը գլխավորող ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանին ողջունել է ԵԱՀԿ գործող նախագահ, Լեհաստանի ԱԳ նախարար Զբիգնեւ Ռաուն:

ԱԶԱՏ ԱՐՁԱԿՎԵՑ

Ի՞ՆՉ Է ԿԱՏԱՐՎԵԼ ԳԻՇԵՐԱՅԻՆ ԱԿՈՒՄԲՈՒՄ

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ ՀՀ վերաքննիչ դատարանը բավարարել է Արսեն Մարտիրոսյանի պաշտպան Բաֆֆի Ասլանյանի բողոքը, եւ աշխարհի կրկնակի չեմպիոն Սիմոն Մարտիրոսյանի՝ Եվրոպայի չեմպիոն եղբայր Արսեն Մարտիրոսյանն ազատ է արձակվել:

Ինչպես հայտնի է, այս տարվա սեպտեմբերի 16-ին Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Կարինե Դավթյանը մասնակիորեն բավարարել է քրեական վարույթով քննիչի կողմից ներկայացված միջնորդությունը եւ 40 օր ժամկետով կալանավորումը որպես խափանման միջոց է ընտրել ծանրամարտի աշխարհի ու Եվրոպայի կրկնակի չեմպիոն, օլիմպիական խաղերի կրկնակի փոխչեմպիոն Սիմոն Մարտիրոսյանի եղբոր՝ծանրամարտի Հայաստանի հավաքականի անդամ, Եվրոպայի չեմպիոն եւ մրցանակակիր, միջազգային կարգի սպորտի վարպետ Արսեն Մարտիրոսյանի նկատմամբ:

Արսեն Գեւորգի Մարտիրոսյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ 2022 թվականի սեպտեմբերի 6-ին՝ժամը 01-ի սահմաններում, երեք անձանց հետ հաճախել է Փարաքար գյուղի Մեսրոպ Մաշտոց փողոցի 2/2 հասցեում գտնվող «Կալիֆորնիա» գիշերային ակումբ: Ժամը 01:23-ի սահմաններում Ա. Մարտիրոսյանը դուրս է եկել նախասրահ, որտեղ նրան դիտողություն է արել ակումբի անվտանգության աշխատակից Արթուր Սարգսյանը սրահում սուլելու կապակցությամբ:

Շուրջ 2 րոպե վերջինիս հետ զրուցելուց հետո կրկին գնացել է ակումբի ժամանցային սրահ: Ժամը 01:40-ի սահմաններում Ա. Մարտիրոսյանը ընկերների հետ դուրս է եկել ակումբից եւ վերջիններիս ճանապարհելուց հետո Ա. Սարգսյանի հետ խոսակցությունը շարունակելու նպատակով վերադարձել է ակումբ եւ նրան դուրս հրավիրել: Ակումբի դիմաց՝ մեքենաների կանգառի համար նախատեսված հատվածում, իրեն դիտողություն անելու չնչին առիթն օգտագործելով, վիճաբանության է բռնվել նրա հետ, ինչին միջամտել է անվտանգության մյուս աշխատակից Միհրան Քոչարյանը՝ փորձելով հանդարտեցնել:

Այդ ընթացքում՝ ժամը 02:04 րոպեին առաջացած փոխադարձ հրմշտոցի ժամանակ, իր առավելությունն ընդգծելու շարժառիթով, իրենց աշխատանքային պարտականությունները կատարող անձանց կողմից դիտողությանն ի պատասխան, նախապես իր մոտ եղած՝ չպարզված կտրող-ծակող առարկայով հարվածներ է հասցրել Միհրան Քոչարյանի մարմնի տարբեր հատվածներին՝պատճառելով կրծքավանդակի ձախ կեսի կտրած-ծակած թափանցող վերք, ձախակողմյան հետմոպնեւմոթորաքս, ցայլքի շրջանի ծակած կտրած չթափանցող վերքերի տեսքով վնասվածքներ, որից հետո, հետապնդելով փախչող Արթուր Սարգսյանին, ակումբի մուտքի դռան դիմաց՝ ավտոճանապարհի բանուկ հատվածում, մեկ անգամ նույն առարկայով հարվածել է վերջինիս՝պատճառելով որովայնի ձախ կեսի կտրած-ծակած թափանցող վնասվածք, ստոծանու վնասմամբ, ներքին եւ արտաքին արյունահոսություն վնասվածքներ:

Այսինքն՝Արսեն Գեւորգի Մարտիրոսյանին մեղսագրվում է ՀՀ քրեական օրենսգրքի 166-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ եւ 10-րդ կետերով եւ ՀՀ քրեական օրենսգրքի 166-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ եւ 10-րդ կետերով նախատեսված հանցավոր արարքների կատարում: Ի դեպ, քրեական վարույթով նախաքննությունը ավարտվել է, եւ գործը մտել է դատարան:

ԼՈՒՐԵՐ

ԻՆՔՆԱԹԻՌ Է ԸՆԿԵԼ

Քիչ առաջ հայտնել էինք, որ երեկ՝դեկտեմբերի 1-ին՝ ժամը 14:20-ին, Ճգնաժամային կառավարման ազգային կենտրոն տեղեկություն է ստացվել, որ Կոտայքի մարզի Զրաբեր գյուղի տարածքում B55 տիպի ինքնաթիռն ընկել է եւ բռնկվել:

Տեղում հայտնաբերվել է 2 այրված դի:

Հրդեհը մարվել է ժամը 14:41-ին: ArmLur.am-ին նոր մանրամասներ են հայտնի դարձել ողբերգական միջադեպից: Մահացած 2 անձը եղել են Սլովենիայի Հանրապետության քաղաքացիներ, որոնք իրենց սեփական ինքնաթիռով մեկնելիս են եղել Աստրախան: Մեր տեղեկություններով՝ ինքնաթիռի կործանման պատճառը եղել է մառախուղը:

ՎՃԻՌԸ ՀՐԱՊԱՐԱԿՎԵՑ

Երեկ փաստաբան Ռուբեն Մելիքյանը հայտնեց. «Դատարանը (նախագահող դատավոր՝ Մնացական Մարտիրոսյան) այսօր հրապարակեց «պատմության ուսուցչի» գործով դատավճիռը: «Բռնության կոչերի» հոդվածով Հակոբ Գրիգորյանը դատապարտվեց 150 հազար դրամ տուգանքի:

Հաշվի առնելով դատավորի հետագիծն ու հանրային ընկալումը՝ մեղադրական դատավճիռը մեզ համար անակնկալ չէր: Մենք բնականաբար համաձայն չենք դատավճռին եւ վստահորդիս հետ կքննարկենք դատական ակտի բողոքարկման հարցը միայն դրա ամբողջական տեքստը ստանալուց հետո. մեզ շատ հետաքրքիր է, թե ինչ փաստարկներով է դատարանը հերքել մեր պնդումները»:

Հիշեցնենք, որ Հակոբ Գրիգորյանին մեղադրանք է առաջադրվել, որ նա, աշխատելով Երեւան քաղաքի Հր. Քոչար 29 հասցեում գործող Գայի անվան թիվ 129 հիմնական դպրոցում՝ որպես պատմության ուսուցիչ, համաձայն չլինելով ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի վարած քաղաքականության հետ եւ քաղաքական այլ հայացքներ ունենալու հանգամանքով պայմանավորված, 2021 թվականի մայիսի 21-ին՝ ժամը 12:00-ի սահմաններում, 7-րդ դասարանի պատմության դասաժամին, օգտագործելով իր պաշտոնեական դիրքը, աշակերտների ներկայությամբ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի եւ նրա ընտանիքի անդամների նկատմամբ արել է բռնություն գործադրելու հրապարակային կոչեր, այն է՝ հայտարարել է, որ Նիկոլ Փաշինյանին պետք է սպանել, նրան եւ նրա ընտանիքին պետք է հրապարակում վառել: Վերջինիս մեղադրանք է առաջադրվել 226.2 երկրորդ մասի 2-րդ կետի հատկանիշներով՝ բռնություն գործադրելու հրապարակային կոչերը, բռնությունը հրապարակայնորեն արդարացնելը կամ քարոզելը, որը պատժվում է ազատազրկմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ մեկից երեք տարի ժամկետով, կամ առանց դրա:

Նյութերը՝ ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ

ԼՈՒՐԵՐ

ԱՆՉԱՓԱՀԱՍԻ ԵՆ ԴԱՆԱԿԱՀԱՐԵԼ

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ Մուշեղ Հովհաննիսյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, հանդիսանալով ՀՀ Կոտայքի մարզի «Իսահակ Վիրաբյանի անվան» միջնակարգ դպրոցի 8-րդ դասարանի աշակերտ եւ ճանաչելով նույն դպրոցի 10-րդ դասարանի աշակերտ Համլետ Արսենի Մարտիրոսյանին, 2022 թվականի մարտի 1-ին՝ ժամը 23:26-ին, Instagram սոցիալական կայքով նամակագրություն է ունեցել վերջինիս հետ, որի ընթացքում առաջացած տարաձայնությունների պատճառով հայհոյանքներ են հնչեցրել միմյանց հասցեին, ինչի կապակցությամբ պարզաբանումներ ստանալու նպատակով 2022 թվականի մարտի 2-ին՝ժամը 13-ի սահմաններում, Մուշեղ Հովհաննիսյանը զանգահարել է Համլետ Մարտիրոսյանին եւ պայմանավորվել, ու նույն օրը՝ ժամը 16:00-ին, հանդիպել են Բալահովիտ գյուղի Գուրգեն Արշակյան թաղամասի 1-ին փողոցի 1-ին փակուղում գտնվող, նախկինում մանկապարտեզ հանդիսացած կիսակառույց շինության հետնամասում, որտեղ նախորդ օրվա հնչեցրած հայհոյանքների հետ կապված ծագած վիճաբանության ժամանակ Մուշեղ Հովհաննիսյանը Համլետ Մարտիրոսյանի առողջությանը վնաս պատճառելու դիտավորությամբ տաբատի աջ գրպանից հանել է սուր կտրող-ծակող գործիք հանդիսացող դանակը եւ դրանով հարվածներ հասցրել Համլետ Մարտիրոսյանի կրծքավանդակի ձախ կեսի առաջավերին մակերեսին եւ որովայնի ձախ կեսի առաջային մակերեսին՝ վերջինիս առողջությանը պատճառելով «կրծքավանդակի ձախ կեսի առաջավերին մակերեսի ծակած-կտրած չթափանցող վերքեր»-ի ձեւով առողջության թեթեւ վնասի հատկանիշներ պարունակող վնաս եւ «որովայնի ձախ կեսի առաջային մակերեսի ծակած-կտրած թափանցող վերքի՝ ուղեկցված ստամոքսի մեծ կորության վնասման» ձեւով կյանքի համար վտանգավոր՝ առողջության ծանր վնաս, որից անիջապես հետո դիմել է փախուստի:

ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՒՏ ԼՈՒՐ

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ Էդգար Բաբայանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա անորոշ շրջանակի անձանց մոտ լրջագույն անհանգստություն, տագնապ, վախ առաջացնելու, հասարակական անվտանգությունը վտանգելու նպատակով տվել է նախապատրաստվող ահաբեկչության մասին սուտ հաղորդում:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ նոյեմբերի 23-ից 24-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտել են հանցագործության 61 դեպք, որոնցից 1-ը՝նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ԼՈՒՐԵՐ

ՎԿԱՅԱԳՐԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ

Կառավարությունն ընդունել է որոշում մարզերում իրականացված շահառու ընտանիքների վերահաշվառման արդյունքում ի հայտ եկած խնդիրներին լուծում տալու, մարզերում բնակարանների գնման վկայագրերի (ԲԳՎ) տրամադրման կարգը եւ պայմանները լրամշակելու նպատակով: Կապահովվի տրամադրվող ֆինանսական աջակցության չափի որոշումը, ինչպես նաեւ անձանց իրավունքների իրացման երաշխավորումը: Արդյունքում փաստացի ԲԳՎ ստացած, սակայն 1 տարվա ժամկետը դեռեւս չսպառած անձինք կունենան ծրագրից արդյունավետ օգտվելու, մշտական օթեւան ունենալու հնարավորություն: Որոշման նպատակներից է լուծել 1988-1992 թթ. Ադրբեջանի Հանրապետությունից բռնի տեղահանված ընտանիքների բնակարանային հարցը ՀՀ մարզերում: Հիմնավորման համաձայն՝ ԲԳՎ-ների տրամադրման ծրագիրը 2020-2021 թթ. ընթացքում իրականացվել է Երեւան քաղաքում, եւ դրա շրջանակում բնակարանի գնման վկայագրեր են ստացել 270 ընտանիքներ, որոնցից 205-ը 2022 թ. օգոստոսի 1-ի դրությամբ արդեն իրացրել են վկայագրերը եւ գնել են բնակարաններ (փաստացի ծախսը կազմել է շուրջ 2.8 մլրդ դրամ): Այժմ նախատեսվում է այն իրականացնել ՀՀ մարզերում: 2022 թ. սկզբից մեկնարկած՝ մարզերում բնակվող հավակնորդ շահառու ընտանիքների վերահաշվառման արդյունքներով՝ ՀՀ 10 մարզերում բնակվում է 194 հավակնորդ շահառու ընտանիք:

ԿԱՋԱՏՎԵՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԻՑ

Տրանսպորտային միջոցների ներմուծման ոլորտի զարգացմանը եւ այդ ոլորտում առկա խնդիրները լուծելու նպատակով գործադիրն ընդունել է համապատասխան որոշում. տրանսպորտային միջոցների ներմուծում իրականացնող (ֆիզիկական եւ իրավաբանական) անձինք կազատվեն ավելորդ վարչարարությունից եւ անհարկի ֆինանսական կորուստներից: Հիմնավորման համաձայն՝ ներկայումս ՀՀ ներմուծվող տրանսպորտային միջոցների մաքսազերծումը չի իրականացվում ՀՀ սահմանին՝ ներմուծման ժամանակ, այլ դա իրականացվում է ՀՀ սահմանից հեռու, այլ բնակավայրերում (օրինակ՝ Սիսիան, Գյումրի քաղաքներում, իսկ կազմակերպությունների կողմից տ/մ-ի ներմուծման դեպքում՝ Երեւան քաղաքում), ինչից հետո նոր միայն տրանսպորտային միջոցը մաքսային ձեւակերպում իրականացնող մաքսային մարմնի կողմից ստանում է «Ժամանակավոր» համարանիշ: Շատ հաճախ ՀՀ ներմուծվող տ/մ-ները սահմանից մինչեւ մաքսային ձեւակերպման վայրեր հասցնելու համար ստիպված են լինում օգտվել ավտոտարհանիչների ծառայություններից, իսկ ներմուծողները ստիպված են լինում ավտոտարհանման համար վճարել բավականին մեծ, հաճախ կամայական եւ ոչ ողջամիտ գումար նույնիսկ այն պարագայում, երբ տ/մ-ն սարքին վիճակում է եւ հնարավորություն ունի վարելու միջոցով հասնել մաքսային ձեւակերպման վայր: Ըստ այդմ՝ առաջարկվում է ՀՀ սահմանին մաքսային մարմիներին լիազորել ՀՀ ներմուծվող եւ պետական գրանցման ենթակա տ/մ-ներին «Ժամանակավոր» տեսակի համարանիշեր հատկացնելու իրավասությամբ:

ՄԱՐՔ

ՓԱՇԻՆՅԱՆԻ ԸՆԿԵՐՈՋ ՀՈՎԱՆՈՒ ՆԵՐՔՈ

Քրեական գործերով վերաքննիչ դատարանում շարունակվում է 2019թ. դեկտեմբերի 27-ից Իջեւանի բժշկական կենտրոնի տնօրեն, Երեւանի բնակիչ, 1973թ. ծնված Էդուարդ Գրիգորյանի դատավարությունը: Նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 376-րդ հոդվածի 1-ին մասով՝ այն բանի համար, որ նա, 2009թ.-ի հունվարից մինչեւ 2019թ. հուլիսի 1-ը հանդիսանալով ՀՀ ՊՆ զորամասի (Բերդի առանձին բժշկական ջոկաս) հրամանատար, պատշգամատար անձ, կոչումով բուժծառայության փոխգնդապետ, պարտավոր լինելով հոսպիտալում բաղաքացիական անձանց անվճար բուժսպասարկելուց առաջ պահպանել ՀՀ-ում գործող համապատասխան օրենսդրությամբ եւ մի շարք իրավական ակտերով նախատեսված դրույթների պահանջները, անփույթ վերաբերմունք է դրսեւորել ծառայության նկատմամբ, առանց հաստատված գնացուցակով սահմանված 200.000 դրամ գումար գանձելու, 2019թ. հունվարի 23-ին վիրահատել է Պառավաքարի բնակիչ Անահիտ Աղաջանյանին, ապա օրենքի խախտմամբ 2019թ. հունվարի 29-ին, առանց հաստատված գնացուցակով սահմանված 180.000 դրամ գումար գանձելու, վիրահատել է Մոսկեսի բնակիչ Վոլոդյա Ավալյանին, սահմանված դրույթների խախտմամբ 2019թ. հունվարի 30-ին, առանց հաստատված գնացուցակով սահմանված 150.000 ՀՀ դրամ գումար գանձելու, վիրահատել է Նավուրի բնակիչ Ալիսա Մարդանյանին, 2019թ. փետրվարի 25-ին, առանց հաստատված գնացուցակով սահմանված 140.000 դրամ գումար գանձելու, վիրահատել է Վազաշենի բնակիչ Գայանե Ամիխանյանին, ինչի արդյունքում էական վնաս է պատճառվել. ընդհանուր 670.000 ՀՀ դրամ գումար զինհոսպիտալի դրամարկղ չի վճարվել:

Է. Գրիգորյանը պետությանը պատճառած 670.000 դրամ գումարը նախաքննության ընթացքում ամբողջությամբ վերականգնել է: Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի դատավոր Ռաֆիկ Մելքոնյանը 2019թ. հոկտեմբերի 17-ին որոշում է կայացրել քրեական գործի վարույթը կարճելու եւ Է. Գրիգորյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին: ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը 2020թ. փետրվարի 21-ին որոշում է կայացրել Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի որոշումը բեկանելու եւ նոր քննության ուղարկելու մասին: 2022թ. հունիսի 17-ին Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի դատավոր Ս. Մարդանյանը որոշել է Է. Գրիգորյանին մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 376-րդ հոդվածի 1-ին մասով, վաղեմության ժամկետն անցնելու հիմքով Է. Գրիգորյանին ազատել ՀՀ քրեական օրենսգրքի 376-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված քրեական պատասխանատվությունից: Դատախազությունը բողոքարկել է այդ վճիռը՝ խնդրելով բեկանել Տավուշի մարզի աաջին ատյանի դատարանի որոշումը եւ Է. Գրիգորյանին դատապարտել ազատազրկման 2 տարի ժամկետով՝ սահմանելով 2 տարի ժամկետով փորձաշրջան:

Սույն գործով վերաքննիչ դատարանում հերթական նիստը նշանակված է դեկտեմբերի 8-ին: Իջեւանի ԲԿ-ից հայտնում են, որ Նիկոլ Փաշինյանի մանկության ընկեր, 2018-2019թթ. Տավուշի մարզպետ, այժմ ԱԺ մշտական հանձնաժողովի նախագահ Վահե Ղալումյանը նախկինում փորձել է Է. Գրիգորյանին դարձնել Բերդի ԲԿ-ի տնօրեն, սակայն այդ նպատակով Տավուշի մարզպետարանից գնացած պաշտոնյաներին Բերդի ԲԿ-ում մեծ, կոշտ դիմադրություն են ցուցաբերել: Դրանից հետո Վահե Ղալումյանը Է. Գրիգորյանին դարձրել է Իջեւանի ԲԿ-ի տնօրեն: Իջեւանի ԲԿ-ի իրազեկ աղբյուրը հայտնեց, որ 2021թ. հունիսի 20-ի խորհրդարանական ընտրություններում Է. Գրիգորյանը աջակցել է Ռոբերտ Քոչարյանին, Է. Գրիգորյանի որդուն տեսել են Քոչարյանի՝ Բերդ քաղաքի շտաբում: Ընտրություններից հետո ՔՊ-ականները այդ առթիվ աղմուկ են բարձրացրել, հարցը հասել է վարչապետ Նիկոլ Փաշինյանին, սակայն վերջինիս մանկության ընկեր Վահե Ղալումյանը Նիկոլ Փաշինյանին ասել է. «Էդիկը լավ տղա է»: Իջեւանի ԲԿ-ից հայտնում են, որ Վահե Ղալումյանը ամենեւին Է. Գրիգորյանի «սիրուն աչքերի համար» չէ նրան Իջեւանի ԲԿ տնօրեն դարձրել, նրան հովանավորել ու հովանավորում է, Նիկոլ Փաշինյանի մոտ նրան լավ տղա անվանել:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԿԱՐԳԵԼԿԻ

ՍՆԴԻԿԱՅԻՆ ՋԵՐՄԱՉԱՓՆԵՐԸ ԴՈՒՐՍ ԿԳԱՆ

Կառավարությունն իր երեկվա՝ դեկտեմբերի 1-ի նիստում ընդունեց Հայաստանից արտահանման եւ Հայաստան ներմուծման համար արգելված սնդիկի հավելիչով արտադրանքի ցանկը սահմանելու մասին որոշումը:

Որոշման հիմնավորման մեջ նշվում է, որ, օրենքի համաձայն, օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ վեց ամսվա ընթացքում, Կառավարությունը սահմանում է սնդիկի հավելիչով արտադրանքի ցանկը, որոնց արտահանումը Հայաստանի Հանրապետությունից եւ ներմուծումը Հայաստանի Հանրապետություն արգելվում է:

Նախագծով նախատեսվում է արգելք սահմանել սնդիկի հավելիչով այն արտադրանքի ներմուծման եւ արտահանման վրա, որոնք չեն համապատասխանում այդ արտադրանքի անվտանգությունը կանոնակարգող Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջներին:

Սույն նախագծի հավելվածի ցանկում ներառված ապրանքների ներմուծման եւ արտահանման արգելքը վեց ամիս ժամկետով սահմանելը պայմանավորված է հետեւյալ հանգամանքով.

բազմաթիվ երկրներ, դադարեցնելով սնդիկ պարունակող ապրանքների արտադրությունը, անցում են կատարել այդ ապրանքների սնդիկ չպարունակող այլընտրանքների արտադրությանը եւ կիրառմանը:

Սնդիկային ջերմաչափերի փոխարեն օգտագործվում են էլեկտրոնային ջերմաչափեր, ինֆրակարմիր ճառագայթով աշխատող (անհպում) ջերմաչափեր, ինչպես նաեւ հեղուկ նյութերով աշխատող ջերմաչափեր:

Սնդիկ պարունակող բարոմետրերի (մթնոլորտային ճնշումը չափելու սարք), հիգրոմետրերի (մթնոլորտային օդի եւ այլ գազի խոնավաչափ), մանոմետրերի (հեղուկների եւ գազերի ճնշումը չափելու սարք) եւ սֆիգմոմանոմետրերի (արյան ճնշումը չափելու սարք) փոխարեն օգտագործվում են սնդիկ չպարունակվող մեխանիկական եւ էլեկտրոնային սարքավորումներ:

Նախագծով նախատեսվում է հաստատել սնդիկի հավելիչով արտադրանքի ՀՀ-ից արտահանման եւ ՀՀ ներմուծման արգելք՝ վեց ամիս ժամկետով:

Նախագծով նախատեսվում է ներմուծման կամ արտահանման համար արգելված սնդիկի հավելիչով արտադրանքի համար սահմանել բացառություններ, եթե դրանք անհրաժեշտ են՝ քաղաքացիական պաշտպանության կամ ռազմական նպատակներով, հետազոտությունների, սարքերի չափաբերման կամ որպես չափանմուշ օգտագործման համար:

Նախագծի ընդունմամբ կապահովվի Կոնվենցիայով եւ «Սնդիկի մասին» օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված պահանջը, ինչը կհանգեցնի սնդիկի հավելիչով արտադրանքների ներմուծման կրճատմանը, դրանց շրջանառությունից փուլային դուրսբերմանը, սնդիկ պարունակող վտանգավոր թափոնների գոյացման կանխարգելմանը:

● *Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 10 ՃՏՊ. 1 մարդ զոհվել է, 22-ը՝ ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԽՐԱԽՈՒՍՎՈՒՄ ԵՆ

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ

Կառավարության որոշմամբ՝ «Վերտեքս Գրուպ» ՍՊԸ-ն գերակա ոլորտում իրականացվող ներդրումային ծրագրի շրջանակում կօգտվի մաքսատուրքից ազատվելու արտոնությունից: Ընկերությունը ներմուծվող հումքը նախատեսում է օգտագործել ինքնակպչուն ժապավենների արտադրության համար: Ընկերության կողմից տարվում են բանակցություններ դեպի ՌԴ եւ Վրաստան արտադրանքի արտահանման նպատակով: Ծրագրի շրջանակում նախատեսվում է իրականացնել 1.4 մլրդ դրամի ներդրում հումքի ձեռքբերման համար: Նախատեսվում է ստեղծել 5 նոր աշխատատեղ՝ մինչեւ 350 հազ դրամ միջին ամսական աշխատավարձով: Արտոնություն ստանալու համար ներկայացված ապրանքների արժեքը կազմում է 1.4 մլրդ դրամ: Մաքսատուրքից ազատման արտոնությունը գնահատվում է 90 մլն դրամ:

Գործադիրի մեկ այլ որոշմամբ՝ մաքսատուրքից ազատվելու արտոնությունից կօգտվի նաեւ «Տոսպ Գրուպ» ՍՊԸ-ն: Ընկերությունը ներմուծվող հումքը կօգտագործի կանացի, տղամարդու եւ մանկական հագուստի արտադրության համար: Ծրագրի շրջանակում նախատեսվում է իրականացնել 50 մլն դրամի ներդրում սարքավորումների ձեռքբերման համար, 175 մլն դրամի ներդրում՝ շինարարական աշխատանքների իրականացման համար, եւ 2.6 մլրդ դրամի ներդրում՝ հումքի ձեռքբերման համար: Նախատեսվում է ստեղծել 70 նոր աշխատատեղ՝ մինչեւ 243 հազ. դրամ միջին ամսական աշխատավարձով: Արտոնություն ստանալու համար ներկայացված ապրանքների արժեքը կազմում է 2.6 մլրդ դրամ: Մաքսատուրքից ազատման արտոնությունը գնահատվում է 210 մլն դրամ:

«ՎանՍեւան» ՍՊԸ-ին նույնպես տրամադրվել է գերակա ոլորտում իրականացվող ներդրումային ծրագրի շրջանակում ներմուծման մաքսատուրքից ազատվելու արտոնությունից օգտվելու թույլտություն: «ՎանՍեւան»-ը ներմուծվող սարքավորումները կօգտագործի գինու արտադրության համար: Ծրագրի շրջանակում նախատեսվում է իրականացնել 40.1 մլն դրամի ներդրում սարքավորումների ձեռքբերման համար: Նախատեսվում է ներդրումային ծրագրի շրջանակներում ստեղծել 11 նոր աշխատատեղ: Արտոնություն ստանալու համար ներկայացված ապրանքների արժեքը կազմում է 40.1 մլն դրամ: Մաքսատուրքից ազատման արտոնությունը գնահատվում է 3.8 մլն դրամ:

ՏԵՍԱԽՑԻԿՆԵՐ

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄՆԵՐ՝ ՏՆՏԵՍՎԱՐՈՂՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ

Հայաստանի ոստիկանությունը երկրում կատարվող հանցագործությունների բացահայտման նոր տարբերակ է մշակել, իհարկե՝ տնտեսվարողների հաշվին: Այսինքն՝ ՀՀ-ում գործող մի շարք տնտեսվարող այուբեկտներ, այդ թվում եւ՝ լիցենզավորվող գործունեություն իրականացնող, իրենց տարածքներում պետք է տեղադրեն տեսանկարահանող համակարգեր, իսկ ոստիկանությունն օնլայն հետեւելու է: Ավելին, պարզվում է, որ որոշման մասին այս նախագիծը ոստիկանությունը մշակել է ՀՀ ԱԺ ՔՊ-ական պատգամավոր Հայկ Սարգսյանի հետ միասին:

Օրինակ՝ վարկային կազմակերպության եւ դրա մասնաճյուղերի մուտքը եւ շինության բոլոր կողմերը դրսից պետք է ապահովված լինեն անընդմեջ եւ բարձր որակի տեսաձայնագրություն իրականացնող տեսահսկման համակարգերով՝ օրվա մութ ժամերին նկարահանելու եւ տեսաձայնագրությունն առնվազն 10 օր պահպանելու հնարավորությամբ:

Իսկ տեսահսկման համակարգերի պարտադիր կահավորումը պետք է իրականացվի այնպես, որ եթե տվյալ տարածքը տեղակայված է շենք առաջին հարկում, ապա տվյալ տարածքի երկայնքով ապահովվի երկկողմանի տեսահսկում՝ տեսախցիկների տեսադաշտում ներառելով մուտքի դուռը, երկայնքով՝ ամբողջ տարածքը, եթե տվյալ տարածքը առանձին շենք է, ապա ապահովվի ամբողջ տարածքի պարագծի տեսահսկում՝ ներառելով մուտքի դուռը, եթե տվյալ տարածքը առանձին շենք է, որն առանձնացված է պարսպով, ապա ապահովվի ամբողջ պարսպի երկայնքով պարագծի տեսահսկում՝ ներառելով մուտքի դուռը:

Տեսահսկվող տարածքում պետք է փակցված լինեն «Տարածքը եւ դրա շրջակայքը տեսաձայնագրվում են» բովանդակությամբ հայտարարություններ:

Նշենք, որ բանկի, օտարերկրյա բանկի մասնաճյուղի կամ բանկի տարածքային ստորաբաժանման մուտքը եւ շինության բոլոր կողմերը նույնպես պետք է դրսից ապահովված լինեն տեսաձայնագրություն իրականացնող տեսահսկման համակարգերով:

ArmLur.am-ը տեղեկացավ, որ ոստիկանությունը օնլայն տարբերակով հետեւելու է հասարակական տրանսպորտը: Ոստիկանությունն առաջարկում է ավտոբուսների եւ միկրոավտոբուսների ուղեսրահները եւս ապահովել բարձր որակի տեսաձայնագրություն իրականացնող տեսահսկման համակարգերով՝ օրվա մութ ժամերին նկարահանելու եւ տեսաձայնագրությունն առնվազն 10 օր պահպանելու հնարավորությամբ: Տեսահսկման համակարգերի պարտադիր կահավորումը պետք է իրականացվի այնպես, որ հնարավորություն ունենան տեսահսկելու ավտոբուսի կամ միկրոավտոբուսի ուղեսրահը եւ ավտոբուսի կամ միկրոավտոբուսի դիմացի հատվածն ամբողջությամբ: Հայտնի է, որ գրպանահատության դեպքերը Հայաստանում մեծ աճ են գրանցել, բայց արդյոք ոստիկանությանը կհաջողվի տեսախցիկների միջոցով դրա դեմն առնել, ցույց կտա ժամանակը: Բայց մյուս կողմից էլ՝ տարածքը տեսահսկման համակարգերով ապահովելու պահանջը խախտելու համար տուգանք է նշանակվելու: Տարածքը տեսահսկման համակարգերով ապահովելու լիցենզիայի պարտադիր պահանջը խախտելը, եթե դա չի առաջացրել «Լիցենզավորման մասին» օրենքով սահմանված պատասխանատվություն, առաջացնում է տուգանքի նշանակում՝ 100.000 դրամի չափով:

Փաստորեն, տիեզերք արձակված առաջին արհեստական արբանյակն էլ դեռ արդյունքներ չի տալիս. չէ՞ որ Նիկոլ Փաշինյանը հայտարարում էր, որ արբանյակի կողմից արված լուսանկարները Հայաստանում օգտագործվելու են սահմանների հսկողության, արտակարգ իրավիճակների կանխարգելման եւ կառավարման ոլորտում. ոստիկանությունը հույսը դրել է տնտեսվարող սուբյեկտների վրա:

ՍՅՈՒՆԷ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՏՏ ՈԼՈՐՏ

ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ

Գործադիրը հաստատել է տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում գործունեություն իրականացնող առեւտրային կազմակերպություններին եւ անհատ ձեռնարկատերերին պետական աջակցության տրամադրման կարգը՝ հանրապետությունում տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացմանը օժանդակելու, ինչպես նաեւ Հայաստանի այլ երկրների հետ արդյունավետ մրցակցելու հնարավորության պահպանման նպատակով:

Հիմնավորման համաձայն՝ SS ոլորտում գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների գործունեության խթանների առումով տարբեր երկրներում կիրառվում են մի շարք հարկային արտոնություններ: SS ոլորտում գործունեություն իրականացնող կազմակերպությունների մեծ մասն իր եկամուտները ստանում է արտերկրից արտարժույթով. ներկայումս ԱՄՆ դոլարի եւ եվրոյի արժեզրկման արդյունքում համապատասխան ծավալով կրճատվել են տեղական ընկերությունների ֆինանսական մուտքերը, ինչը խոչընդոտ է հանդիսացել կազմակերպությունների բնականոն զարգացմանն ու առաջխաղացմանը: Աջակցության տրամադրումը խթան կհանդիսանա կազմակերպությունների զարգացման համար՝ հնարավորություն ընձեռելով պահպանել առկա աշխատատեղերը՝ միաժամանակ չկրճատելով աշխատակիցների աշխատավարձերը:

Ինչպես նշել է բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարար Ռոբերտ Խաչատրյանը, առաջարկվում է պետական աջակցություն տրամադրել SS ոլորտի այն կազմակերպություններին ու անհատ ձեռնարկատերերին, որոնք 2022 թվականի հունիսից հոկտեմբերին իրենց աշխատակիցներին տրվող աշխատավարձային ֆոնդը չեն կրճատել 20 տոկոսից ավելի, ինչպես նաեւ նրանց կողմից արտերկիր արտահանվող ծառայությունների ծավալն աջակցության տրամադրման ժամանակահատվածում կազմել է իրացման շրջանառության առնվազն 70 տոկոսը: «Նախագծի նպատակն է նաեւ ժամանակային հնարավորություն տալ ոլորտի կազմակերպություններին՝ իրենց բիզնես մոդելի վերափոխման, գործող պայմաններին հարմարվելու, ինչպես նաեւ SS ոլորտի համաշխարհային բարդություններին դիմակայելու համար: Տրամադրվող պետաջակցության չափը ոլորտին նախնական գնահատմամբ կազմում է 10 մլրդ դրամ, ինչը հնարավորություն կտա պահպանել աշխատատեղերը եւ պահպանել աշխատակիցների աշխատավարձերը»,- ասել է նախարարը:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԿԱՐԾԻՔ

ԱՆԴՐԱԴԱՐՁ

ԱՄԵՐԻԿՅԱՆ ԿՅԱՆՔԸ ԵՎ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Դերասանուհի Նաիրա Մովսիսյանը, որը վերջերս է տեղափոխվել Ամերիկայի Միացյալ Նահանգներ, ArmLur.am-ի հետ զրույցում անդրադարձել է ամերիկյան կյանքին եւ զբաղվածությանը:

-Նաիրա՛, Դուք արդեն տեւական ժամանակ է, ինչ բնակվում եք հայաշատ Գլենդել քաղաքում: Ինչո՞վ եք զբաղվում այնտեղ:

-Զբաղվածությունս այստեղ շատ-շատ է, իրականում այստեղ պարապ մնալն անհնար է: Այո, ինձ մոտ հիմա պասիվ շրջան է, բայց, փառք Աստծո, այստեղ եւս ունեցել եմ առաջարկ: Անկեղծ ասած, ստեղծագործող մարդու համար պետք է լինի սիրտ, հավես, տրամադրություն եւս, քանի որ անկախ նրանից, թե որտեղ ես ապրում, ծանր ես տանում եւ ռեալ գիտակցում ես, թե ինչ է կատարվում քո երկրում, քո ազգի հետ. դա է պատճառը, որ նախընտրում եմ պասիվ լինել:

-Սովորաբար Ձեր կոլեգաները, երբ հայրենիքից հեռանում են, սկզբնական շրջանում անցնում են որոշակի դժվարությունների միջով: Դուք ի՞նչ դժվարություններ եք հաղթահարել:

-Աշխատել եմ մեծերի մանկապարտեզում, շարունակում եմ դիմահարդարում անելը, մի ամբողջ կազմակերպություն եմ ղեկավարում եւ, իհարկե, զբաղվում եմ բժշկությամբ, որի մասին, ցավոք սրտի, չեմ կարող խոսել, քանի որ կան հայի վատ տեսակներ, որոնք նեղվում են, որ դու կարող ես մի քանի մասնագիտություն ունենալ, իսկ իրենք, դիվան քշելով, փորձում են թույլ տալ իրենց կարծիք հայտնել: Սովորում եմ բժշկություն ու միաժամանակ աշխատում եմ, ինչի մասին դեռ չեմ ցանկանում խոսել: Իմ կարծիքով՝ դժվարությունները կյանքի մի ընթացք են, որը պետք է հաղթահարես: Դժվար էր, երբ դստերս հետ տեղաշարժվում էի ավտոբոսով, քանի որ մեքենա չունեի, բայց շնորհակալ եմ բոլոր այն մարդկանց, որոնք իմ կողքին են եղել եւ մշտապես ամեն պարագայում աջակցել եւ սեր են տվել:

-Իսկ ինչո՞ւ որոշեցիք մեկնել Հայաստանից եւ բնակվել ԱՄՆ-ում:

-Հատուկ պատճառ չկա, պարզապես այս անգամ երկարաժամկետ եմ այստեղ գտնվում, քանի որ ունեմ շատ գործեր, միջոցառում, որը պետք է անցկացնեմ անձամբ ես, եւ դա է պատճառը, որ իմ՝ Հայաստան գալը հետաձգվում է, բայց դա չի նշանակում, որ ես այստեղ մշտական եմ հաստատվել: Ես միշտ ասել եմ՝ ուր էլ որ գնամ, հետ եմ գալու իմ հայրենիք:

-Այժմ Հայաստանում դժվարին օրեր են. հեռվից հետեւո՞ւմ եք իրադարձություններին, ինչպե՞ս եք արձագանքում, ի՞նչ տպավորություն ունեք:

-Հայաստանում արդեն մի քանի տարի է, ինչ դժվարին օրեր են: Հիմա այստեղից, երբ հետեւում եմ, փորձում եմ հասկանալ սփյուռքում ապրող մեր հայրենակիցներին, թե ինչու էին այդքան ծանր տանում մեր երկրի վիճակը: Հեռվից ամեն ինչ ավելի դաժան եւ ցավոտ է, երբ դու ոչնչով չես կարող օգնել քո ժողովրդին: Իսկ երբ Հայաստանում ես, դու գոնե կարող ես գնալ, փորձել գոնե աջակցել, ինչով կարող ես: Կուզենայի նաեւ վստահ ասել, որ լավ օրից ոչ մեկը հայրենիքից չի գնում: Հիմա ինձ համար շատ դժվար է, քանի որ կուզենայի լինել իմ հայրենիքում՝ հարազատներիս, հայենակիցներիս կողքին: Այո՛, ես ցավ եմ ապրում, երբ ամեն օր օդանավակայանում տեսնում եմ, թե ինչքան մարդ է գալիս եւ, ցավոք սրտի, մշտական հաստատվում ԱՄՆ-ում: Ես ցանկանում եմ՝ գա մի օր, որ բոլոր հայերը ետ գան, իսկ ես շուտով գալու եմ, քանի որ ես իմ երկիրը պաշտում եմ եւ խենթանում եմ Հայաստանի օդի համար:

ՆՈՐ ԴԱՋՎԱԾՔ

«ԻՄ ՍՐՏԻՆ ԱՄԵՆԱՄՈՏԸ ԴՈՒ ԷԻՐ, ՀԱՅԿՈ՛»

Երգչուհի, ոճաբան Անահիտ Սիմոնյանն իր հեռեւորդներին ցուցադրել է նոր դաջվածքը: Ուշագրավն այն է, որ երգչուհու նոր դաջվածքը նվիրված է իր նախկին ամուսնուն՝ երգիչ Հայկոյին:

«Իմ սրտին ամենամոտը դու էիր, Հայկո՛»,- այս խոսքերն է դաջել երգչուհին:

Նշենք, որ Անահիտն ու Հայկոն 11 տարվա ամուսնությունից հետո բաժանվել էին, իսկ համատեղ կյանքի ընթացքում ունեցել են մեկ որդի՝ Արմանը:

Հիշեցնենք, որ 2021 թվականի սեպտեմբերի 29-ին կյանքից հեռացել է ՀՀ վաստակավոր արտիստ, սիրված երգիչ, երգահան Հայկոն:

Նյութերը՝ ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻ

ԼՈՒՐԵՐ

ԹՅՈՒՐԻՄԱՑՈՒԹՅՈՒՆ ԷՐ ԵՂԵԼ

Արգենտինայի հավաքականի ավագ եւ հարձակվող Լիոնել Մեսին մեկնաբանել է Մեքսիկայի խաղաշապիկի հետ կապված սկանդալը: Աշխարհի առաջնության խմբային փուլի երկրորդ տուրում Արգենտինայի հավաքականը Մեսիի գոլի եւ գոլային փոխանցման շնորհիվ 2:0 հաշվով հաղթել էր Մեքսիկայի հավաքականին: Խաղից հետո արգենտինացիները հանդերձարանում ցնծությամբ նշել էին հաղթանակը: Մեսին Մեքսիկայի հավաքականի խաղացողի հետ փոխանակած խաղաշապիկը գցել էր հատակին: Տեսագրությունը տարածվել էր սոցիալական ցանցերում:

«Այդ դրվագի հետ կապված կարող եմ միայն ասել, որ թյուրիմացություն էր: Ինձ ճանաչողները գիտեն, որ ես երբեք չեմ դրսեւորում հարգանքի բացակայություն:

Ամեն խաղից հետո էլ հանդերձարանում այդպիսի բաներ են կատարվում: Ես ներողություն խնդրելու պատճառ չեմ տեսնում: Մեքսիկայի ժողովրդին կամ նրանց հավաքականի խաղաշապիկի նկատմամբ քամահրանք ցույց տալու ոչ մի մտադրություն չեմ ունեցել»,- ասել է Մեսին:

Այս գիշեր պրոֆեսիոնալ բռնցքամարտի աշխարհի բացարձակ չեմպիոն, մեքսիկացի Սաուլ Ալվարեսը ներողություն էր խնդրել Մեսիից սպառնալիքների համար: Սաուլ Ալվարեսը «Թվիթեր»-ում արած գրառումով սպառնացել էր Լիոնել Մեսիին Մեքսիկայի հավաքականի խաղաշապիկը տրորելու համար:

ՖՐԱՆՍԻԱՆ ԿԲՈՂՔԱՐԿԻ

Ֆրանսիայի ֆուտբոլի ֆեդերացիան պաշտոնական բողոք կներկայացնի Ֆուտբոլի միջազգային ֆեդերացիա՝ աշխարհի առաջնության խմբային փուլի վերջին տուրի հանդիպման եզրափակիչ սուլիչից հետո Ֆրանսիայի հավաքականի եւ Մադրիդի «Աթլետիկոյի» հարձակվող Անտուան Գրիզմանը գոլը VAR-ով չեղարկելու եւ Ֆրանսիային պարտություն գրանցելու հարցով:

«Կարծում ենք՝ Գրիզմանի գոլը չեղարկելը սխալ որոշում էր: Պետք է 24 ժամում բողոք գրենք: Հիմա կազմում ենք հիմնավորումները»,- ասել է Ֆրանսիայի ֆուտբոլի ֆեդերացիայի ներկայացուցիչը:

Գրիզմանը Թունիսի դեմ խաղում պատասխան գոլը խփել էր ավելացված 8-րդ րոպեին: Հանդիպումն ավարտվել էր 1:1 հաշվով: Սակայն մրցավարն արդեն եզրափակչ սուլիչից հետո VAR-ի օգնությամբ գրանցել էր խաղից դուրս վիճակ եւ փոխել հաշիվը: Չնայած 0:1 հաշվով պարտությանը՝ Ֆրանսիան խմբում գրավեց առաջին տեղը եւ 1/8 եզրափակիչում կմրցի Լեհաստանի հավաքականի հետ:

● *Դեկտեմբերի 3-ին Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնում տեղի կունենա «Չորս պատճառ՝ ամուսնության համար» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 1000-3000 դրամ: Սկիզբը՝ ժամը 19:00-ին:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ինչո՞ւ ներկայացնել հրագործական ապրանքների արտադրության, ներմուծման, առեւտրի ծանուցում:

Լեռնիկ Մարգարյան (51 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. «Հրագործական ապրանքների արտադրություն, ներմուծում կամ առեւտուր» ծանուցման ենթակա գործունեությամբ զբաղվելու իրավունք ձեռք բերելու համար անձը պարտավոր է վճարել օրենքով սահմանված պետական տուրքը եւ պետական տուրքի վճարման անդորրագիրը կամ պետական վճարումների էլեկտրոնային համակարգի կողմից գեներացված անդորրագիրը կամ անդորրագրի 20-նիշանոց ծածկագիրը ծանուցման հետ միաժամանակ ներկայացնել լիազոր մարմին:

«Հրագործական ապրանքների արտադրություն, ներմուծում կամ առեւտուր» ծանուցման ենթակա գործունեություն իրականացնող անձանց հաշվառումը, ծանուցման ենթակա գործունեությամբ զբաղվելու իրավունքի կասեցումն ու դադարեցումը, ինչպես նաեւ ծանուցման ենթակա գործունեության իրականացման հետ կապված բոլոր հարաբերությունները կարգավորվում են «Գործունեության իրականացման ծանուցման մասին» եւ «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով:

ՀՀ ֆինանսների նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Համաձայն «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի՝ «Հրագործական ապրանքների արտադրություն, ներմուծում կամ առեւտուր» գործունեության իրականացման համար տարեկան պետական տուրքը կազմում է՝

- իրավաբանական անձինք՝ 50.000 ՀՀ դրամ,
- ֆիզիկական անձինք՝ 10.000 ՀՀ դրամ:

Էջը՝ ՌՈԶԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ունեմ «ԲՄՎ» մակնիշի մեքենա, որի գույքահարկը վճարվել է մինչեւ 2003թ.-ը: Սեփականատերը գտնվել է երկրից դուրս: Մեքենան գտնվում է անսարք վիճակում: Արդյոք գույքահարկը պե՞տք է վճարվի բոլոր մնացած տարիների համար, թե՞ կլինի բացառություն որոշ տարիների համար:

Տիգրան Ոսկանյան (32 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. «Գույքահարկի մասին» ՀՀ օրենք 2-րդ հոդվածի համաձայն՝ գույքահարկը սեփականության իրավունքով նույն օրենքի 3-րդ հոդվածում նշված անձանց պատկանող հարկվող օբյեկտ համարվող գույքի համար նույն օրենքով սահմանված կարգով եւ չափով համապատասխան բյուջեներ վճարվող ուղղակի հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից, իսկ ՀՀ ԿԱ հարկային պետական ծառայության 23.06.2003թ. ««Գույքահարկի հաշվարկման եւ վճարման կարգի մասին» հրահանգը հաստատելու մասին» 03/17-Ն հրամանով հաստատված «Գույքահարկի հաշվարկման եւ վճարման կարգի մասին» հրահանգի 1-ին կետի համաձայն՝ անկախ ավտոմոբիլային տրանսպորտի միջոցի շահագործման հանգամանքից եւ տեխնիկական վիճակից՝ մինչեւ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ ավտոմոբիլային տրանսպորտի միջոցի՝ հաշվառումից (գրանցումից) հանելը ֆիզիկական անձը պարտավոր է օրենքով սահմանված չափով եւ ժամկետներում վճարել տվյալ ավտոմոբիլային տրանսպորտի միջոցի համար հաշվարկված գույքահարկը:

ՀՀ պետական եկամուտների կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Միաժամանակ, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝ հարկային արտոնությունները սահմանվում են օրենքով, եթե առանձին հարկատեսակների մասին օրենքներով այլ բան նախատեսված չէ:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Երեւանում

ԵՊՀ Շառլ Ազնավուրի անվան մշակույթի կենտրոնում տեղի ունեցավ հանդիպում հայ կոմպոզիտոր, Հայաստանի Հանրապետության ժողովրդական արտիստ Տիգրան Մանսուրյանի հետ: Հանդիպման ընթացքում համալսարանի ռեկտոր Հովհաննես Հովհաննիսյանը մաեստրոյին հանձնեց ԵՊՀ ոսկե մեդալ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (010 54-64-23 հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝ (060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ 010 54-64-23
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության 1.11.2022
Հասցեն՝ Գերպրոնիկի փող. ք. Վարդենիս, Վ. Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: